

ՇԱՐԱԹԱԹԵՐԻ ԳԻՆԸ

Շարեկան գինն է 7 օտարի (փոստի ծախսով): Օտարաբարձար-
ցի բաժնի օրոքները պիտի գինեն այս հասցեով. Be Tushaco, Be Po-
daciho Armanecou Tasemou „Mianaco“.
Քիֆիսում կարելի է ստորագրել խաղաղության մէջ (ստորա-
նա տուն) և ի վանով ընթերցարանում:

ՄԵՐԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆ

Մասնաւոր յայտարարութիւն տալի տուողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կողմի արծաթ: Յայտարարութիւնները
տպուած են չայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիայէն, գերմա-
ներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոն հարկաւոր է թէ ոչ. — Ներ-
քին տեսութիւնն: Ս. Պետրոսեղի լրագրից:
Նամակ Զաքարիայից: Ներքին լուրեր: — Առտա-
քին տեսութիւնն: Ամէրիկա: Նամակ Ղա-
րազաղից: Արտաքին լուրեր: — Յառն լու-
րեր: — Պատասխան: — Առտարական: — Յայտա-
րարութիւններ: — Բանասիրական:

ԹԱՏՐՈՆ ՀԱՐԿԱՒՈՐ Է՞ ԹԷ ՈՉ

Կամենուժեմ սկսել այս յօդվածը մի շատ
տափակ ճշմարտութիւնով: Փորձեցէք մի 12
տարեկան երեխային վերացական փիլիսոփա-
յութեան բովանդակութիւն ունեցող մի
գիրք տալ: — Եւ նա երեւի ոչինչ չի հասկանայ:
Բայց պատրաստեցէք նորան ուրիշ աւելի
հեշտ և մատչելի ընթերցանութեան միջո-
ցով հասկանալ աստիճան առ աստիճան վե-
րացական, ծանր մտքերը: — Եւ դուք ժամա-
նակով նորան հասկանալի կ'անէք և այն
փիլիսոփայական գիրքը:

Փորձեցէք երեխային, իր մայրենի լեզու
չը սովորեցրած, հէնց սկզբից օտար լեզվով
ամեն տարրական առարկաները աւանդելու: —
Եւ նա մեծ տրդիւք և նեղութիւն կը զգայ
կանոնաւոր կերպով մտաւորապէս զարգա-
նալու:

Բայց շարժեցէք նորա հետաքրքրութիւնը
դէպի մտաւոր գործունէութիւն իր մայրենի
լեզվի միջոցով և ժամանակով նա ինքն
պահանջմունք կը զգայ օտար լեզուներին
դիմել իր զարթեցրած ուսումնասիրութեանը
ընդմէջ տալու համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԻՆԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Իդուր են այսքան խոստում մանկավարժութեան
մէջ սխառութիւններ և մեթոդներ լիքայ: . . . Տը-
գէտ, անկիրթ ծնողներ, կամ այն ծնողներն հա-
մար, որոնք զբաղված են իրանց օրական ապ-
րուստի ճարտարութեամբ և սխառութիւնները և
մեթոդները: . . . Իսկ տարրական ուսումնարան-
ներում, որտեղ մանկավարժը ամէն րոպէ անմի-
ջական յարաբերութիւններով մէջ է գտնվում երե-
խաների հետ, նորան ուրիշ գծաւորութիւններն են
պատահում, որոնք ստիպում են նորան մի կողմ
դիմել առժամանակ դաստիարակութեան ուսումնա-
սիրած բոլոր մեթոդները: . . . Այդ պատահած
գծաւորութիւնները երեխաների աւարձեւ, բնա-
ւորութիւնն են:

Մեթոդը և նորա բարի գործադրութիւնը կը-
րոյն է, անհետաճում է երեխաների անհատական
բնավորութեան առաջ, որը կամ բնական է, կամ
ընտանեկան դաստիարակութիւնից պատուարտած
է: Մանկավարժին մնում է, երեխաների հետ ծա-
նոթանալով, ճշգրտեցնել ուսումնասիրել ամեն
մէկի բնավորութեան յատկութիւնները և առանձ-
նութիւնները, ուստի ամեն մի երեխայի հետ վար-
վելով հնարել, յարմարել և գործ դնել նորա բնա-
ւորութեան համեմատ դաստիարակութեան այսինչ
կամ այնինչ միջոց: . . . Միջոցը, անհատական և
միւս միջոցից տարբեր պիտի լինի, ինչպէս և ան-

Մի երիտասարդ մի գիրք է կարդում իր
մայրենի լեզվով: Նորա մէջ յարուցվում են
նոր մտքեր, որոնց լուծմ տալու համար նո-
րան հարկաւոր է դիմել ուրիշ գրքին: Այս
երկրորդը նմանապէս չէ բաւականացնում
նորա ուսումնասիրութեանը, նորա հորիզոնը
փոքր առ փոքր լայնանում է, ընդարձակվում է,
նա դիմում է երրորդ, չորրորդ գրքին, — և
վերջապէս տեսնելով որքան սուղ է մայրենի
գրականութիւնը, տեսնելով որ նա դարձան
չէ տալիս նորա բոլոր պահանջներին, նա
ստիպված է լինում դիմել օտարալեզի գրա-
կանութեանը:

Ահա մտաւոր զարգացման համար բնա-
կան և կանոնաւոր ընթացքը, — զարթեցնել
մարդի մէջ բնական ձգտումն աստիճանա-
բար կրթվելու, հետզհետէ և ինքնաձանա-
յութեամբ առաջ գնալու:

Փորձեցէք մի հայի առաջ ներկայացնել
տալ բնմի վրա օտար կեանքից աւանդած,
կամ օտար մի ազգի մէջ ամենախրեւելի հա-
մարված դրաման, և դուք կը տեսնէք, որ նա
ոչինչ չի հասկանայ, եթէ դեռ ևս իր մայ-
րենի լեզվով բնական գրվածները նա չէ
գնահատում կամ անգամ հասկանում: . . .

Բայց շարժեցէք նորա հետաքրքրութիւնը
շարունակ ներկայացնելով նորան իր մայրենի
լեզվով այնպիսի գրվածները, որք աւանդած
են իր շրջանից, ժողովրդական կեանքից, — և
նա իր շրջանի երեւոյթներով հեռաքրքրվե-
լուց յետոյ, փոքր առ փոքր պահանջ կը
զգայ ընդարձակել իր հորիզոնը և ապա դի-
մել և օտար երեւոյթներին:

Հատական է և մէկ մէկից տարբեր է իւրաքան-
չիւր երեխայի բնավորութիւնը:

Այդ պատճառով ստատիկ սխալվում են նորա,
որոնք կարծում են, թէ տարրական ուսումնարանը,
որտեղ դուք գործ ունէք երեխայի թարմ մտքի
հետ, որը ենթարկվում է ամենաձայնակող ազդե-
ցութիւններին, — սխալվում են, ասում են, նորա,
որոնք կարծում են թէ 50 երեխաներից կազմված
տարրական ուսումնարանը կարող է կառավար-
վել 10, 15, կամ 20 անձերով: . . . Այդ պարն-
ներին ամեն մէկը, թէ և ամենաօրինաւոր մանկա-
վարժ լինէր, իր սեփական ուղղութիւն է մտցնում
ուսումնարանը, անձնական կերպով ազդում է երե-
խայի սրտի և մտքի վրայ, և այդպէս ուրիշից
տարբեր վարվելով խանգարում է, արգելում է, ոչնչ-
նացնում է միւս սխալաբէր ազդեցութիւնը:

Երեխան մի և նոյն ժամանակ գտնվում է զանա-
զան ազդեցութիւնների տակ: — Նա միանգամայն
խառնվում է, չփոթվում է, նա միջոց չունի զար-
գանալ անհատապէս: . . . Բայց, կասեն ինձ, դուք
որ պահանջում էք ձեզ համար մի ուսումնարա-
նում երեխաների վերայ ազդելու, նոյաք բարոյա-
կան ուղղութիւն տալու լիակատար աշատու-
թիւնը, — ով է երաշխաւոր որ դուք ընդունակ էք
այդ պաշտօնը վարելու: . . .

Երաշխաւոր փորձն է, պատաստանում եմ ես: . .
Փորձեցէք մի տարրական ուսումնարանում մի
տեսնել նշանակել, թողնել նորան վարվելու, գոր-
ծելու բոլորովին ազատ ինքնիշխանութիւն: — Կամ երեւո-

թիֆլիսում քանի մի տարի է սկսվեցաւ
մեծ կենդանոցներին, կամ մայրաքաղաքներին
նման կեանքը. իտալական և ռուսաց թատ-
րոն, պարահանդէսներ, կոնցերտներ, զանա-
զան ժողովներ, գիտական և արհեստական
ընկերութիւններ, գրականական երկրներ,
երաժշտական ընկերութիւն, հասարակական
պատահօտութիւններ թէ ֆիզիոլոգիայի թէ
հոգեբանութեան թէ ուրիշ առարկաների
վրա: . . . այն և այլն:

Բայց այս բոլորը մատչելի չէ ստորին դա-
սին կամ միջին անգամ միջին դասի մեծ
մասին:

Ստորին դասը շարունակում է ազատ ժա-
մանակը նուիրել կամ կուրսներին (մուշտի
խիւ) կամ գտնազան ուստագնացու-
թիւններին: Միջին դասը թուղթ խա-
ղալուն, կանայք թուղթ և լուսո խաղալուն,
գիտականները բաժնաւորուն և այլն: . . .

Երեւոյթներ թէ ահա ռուս թատրո-
նում ներկայացնում են Օտորփոսի նշանա-
ւոր մի պիէսատ: Ռուս կենսական երեւոյթ-
ները, հասարակական և ընտանեկան յարա-
բերութիւնները թէ և Օտորփոսի հանձա-
րեղ զբոլը են ներկայացրած, թէ և տա-
ղանդաւոր հեղինակի շնորհով ամենօրեայ
կենսական երեւոյթներից դուրս են բերած
հասարակական բարձր գաղափարներ, — բայց
հայ-վրաց հասարակութեան բազմութեան
համար, որ դեռ սովոր չէ իր մայրենի լեզ-
վով դատել այդ տեսակ հասարակական երե-
ւոյթները վերա, — Օտորփոսի երեւի գործը
բոլորովին կրթողական նշանակութիւն չունի:
Եւ մեր ժողովուրդը չէ գնում այդ տեսակ

թեմաք սպասեցէք նորա բարոյական ազդեցու-
թեան պոտենցիան, ուշադրութիւն դարձէք նորա
գործունէութեան եղանակի վերայ առանց նորան
հնչիւն, ոգորմուխ և զղուխ ինտրիգաներ անելու,
առանց նորա գործունէութեանը ամեն քայլում
արգելքներ դնելու: . . . Եւ ի՞նչ նա օգուտ չէ բե-
րում, — փոխեցէք, ի՞նչ նորա գործունէութիւնը
օգտաւետ է թողնէք նորան իր տեղում: . . .
Բայց միայն, ի՞նչ Ատուած էք սիրում, մի խա-
ռնվէք նորա գործունէութեան մէջ, մի խանգա-
րէք նորան իր պաշտօնը վարելու:

Մանկավարժներից ամեն մէկը իր գործունէու-
թեան, իր վարմունքի եղանակներն ունի: Այդ բա-
ւական չէ: . . . մեզանից ամէն մէկը իր խօսքով,
երեխայի վերայ նայելու ձևերն ունի: . . . Եւ այդ
հնչիւն բան չէ: Մէկը ծաղր է անում չար երե-
խային, միւսը խիստ, բայց քաղցր նկատողութիւն-
ներ է անում, որտեղ նա աշխատում է դիմել երե-
խայի խղճմանը, երրորդը ծանր գէղով խիստ
և չոր նկատողութիւն է անում, չորրորդը ձայն է
բարձրացնում երեխային յանդիմանութիւն անե-
լով: . . .

Երեխան երկար ժամանակ, դեռ ևս անհատա-
կան ուղղութեանը չհասած, ենթարկվում վե ար-
տաքին աշխարհի երեւոյթներին: Երեխան այն բո-
լորովին սկսած, երբ զարթնում է նորա մէջ հատկա-
յաղութեան նշանը, հաւատարիմ արձագանք է
դառնում իրան չընդադատող արտաքին աշխարհի
թէ բարոյական թէ ֆիզիկական երեւոյթներին: Սա

ներկայացումներին, այլ գնում է գուցէ մի
փոքրիկ խումբ այն պարոններին, որք եղած են
քանի մի տարի Ռուսաստանում:

Մնում է ինչ, որովհետեւ մեր հասարա-
կութեանը դեռ մատչելի չէ ոչ ռուս Օտ-
որփոսի հիմնական գրվածները ոչ ընդհա-
նուր մարդկային նշանակութիւն ունեցող
Շէկսպիրի կամ Շիլլերի դրամաները: — մը-
նում է ժողովրդին դէպի թատրոն քաշելու
համար գործ դնել յետագայ միջոցները: Ներ-
կայացնել Օթէնթախի և Սուպլի պիէսաները,
զանազան „Գիւղեցիկ Էլենները“ և „Գայա-
թեաները“ Ֆրանսիական ծաշակով գրված, ինչ-
պէս կապեր մեր աշխատակից Չաբուշ, յիսե-
լօք յիմարութիւններ“ տկոր կուրծքերով
ոտներով ու ձեռքերով ներկայացնող, պար-
կող. իրանց մէջ պապալոյ, զայթակիցու-
ցիչ դերասանութիւնները, — ահա միակ միջոց,
որ մենք գտանք մեր ժողովուրդին գրաւել
դէպի թատրոն:

Բայց այսպիսի միջոց, մենք չենք վստի-
նում անել, անկիրթ. դեռ իր սեպհական,
ազգային, ինքնուրոյն բնական արհեստ չու-
նեցող ժողովրդի համար, անբարոյական է,
վերին աստիճանի վնասակար և անգամ
վտանգաւոր: . . .

Մնում է մեզ գործ դնել այն ճիշդ ման-
կավարժական և զգոյշ մեթոդը թատրոնի
վերաբերութեամբ, ինչպիսին մենք գործ դը-
րինք և երեխայի աստիճանաբար ընթերցա-
սիրութեան վերաբերութեամբ:

Մեր ժողովուրդին պիտի գրաւել թատ-

է երեխայի զարգացումը: Երեւոյթներ դաս-
տիարակել, նշանակում է ընտրութեամբ ա-
ռաջարկել նորան այնպիսի միջոցներ, որոնք
նորա թէ մարմնական, թէ բարոյական և մտաւոր
հետաքրքր զարգացմանը նպաստեն:

Ի՞նչ երեխայի թարմ մտքի վերայ անպէտ մեծ
ազդեցութիւն ունեն արտաքին աշխարհի երեւոյթ-
ները, պէտք է և մեծ ազդեցութիւն ունենաւ նորա
վերայ բարոյական օրինակը: . . . Ուսումնասանի
մէջ երեխայի ոգին, որպէս հայելին ցոյցանալով նո-
րան չընդադատող երեւոյթները, սկսում է արտադ-
րել իր մէջ չընդունի բոլոր յատկութիւնները իր
պակասութիւններով և արժանաւորութիւններով:
Մի կողմից մանկավարժի վարմունքի եղանակը
տպաւորվում է երեխայի վրայ, միւս կողմից ան-
հետ չեն անցնում թարմ և դիւրամտեղ սրտի
համար ընկերների բնավորութեան յատկութիւն-
ները և նոյաք վարմունքը: Երեխայի մտքի վերայ
բազմապիսի երեւոյթների անկապ, անկարգ տը-
պաւորութիւնը անպաշտ վնասակար կազոյ է լի-
նել: Մանկավարժից է կախված կարգի զգել, դա-
սաւորել, երեխայի համար անհրաժեշտ է մեկ-
նից բարոյական ճշմարտութիւնները, յայտարարե-
նելով, տարբեր բնավորութիւններին: . . .

Հասկանալի է թէ ինչ խառնակութիւն պիտի
ծագի, երբ երեխայի կանոնաւոր, մանկավարժա-
կան պաշտօնակատարութիւնը մի անձի տեղ յանձն
կառնեն 10, 15, կամ 20 մարդ: . . .

Այժմ ամեն մի ահաբալմաճառ, աչրը զինվոյ օրո-
շող, անտառի արջը, եկէ՛ն, նա ցանկութիւն ունե-
քա՜նանայ դառնալու, կարող է իւր փոռնակի իշա-
ները վաճառել, մի քառասուն ռուբլի արծաթիկ
կազմել Առաջտորդին, զիմնով, տէրտէր դառնա-
լու անտառում փայտահատութիւնամբ կոտայացա՜ծ,
ածուխի մէջ սևաշու իւր ձեռքը, խնք՝ ժողովուր-
դին համարելի տալ... Նորին սրբապետութիւնը
սեմաւ ռուբլիով կ'աւամբ ընդունում է այդախնե-
րին, և ծէսերն վերացնելէն յետոյ, ասում է իւր

սարգսազին. «Նոր ընծային շուտ հետադուր քաղաքացի, որ մարդիկ չը տեսնեն նորան»:

Մշակի համարում տուրում էր երկարատևական խանութի անցքը և Ամիրզատունի (տեղային գաղա-նապետի) 200 ձիառնով փախտական խանութին հետամուտ լինելը բռնելու համար և այլն:

Բայց ահա մի նոր անցք էս:

Ամիրզատուն, չկարողանալով բռնել խանութին, հանդիպում է մի հայաբնակ գիւղի, և պատճառ բռնելով, թէ փախտական խանութի կայքը թաղ-ցրած է այդ գիւղում, նա յարձակվում է բռնակիչ-ներին վերայ: Գիւղացիք փախտական են լինում, իսկ քահանայն մի քանի մարդիկն են հետ պատ-սպարվում են եկեղեցում: Կոտորվելով գրեթե, Ամիր-զատուն մտնում է եկեղեցին, բռնում է քահա-նային, և երկար տանջելուց ու ծեծելուց յետոյ, ստիպում է նորան, որ նա աւետարան կարդայ, եկեղեցական ծէսեր կատարէ, որ ինքն ծիծաղի և դուարձանայ: Խեղճ քահանայն հնազանդվում է բռնատրի հրամանին: Բայց նորան սկսում են դարձնել ծեծել և երեսին թելել, թէ աւետարանը ուղիղ չէր կարդում, թէ աւետարանի մէջ այս ինչ այն ինչ յիշար խոսքեր գրուած են, բայց նա չէր ասում. . . . Իբրեւ քահանայն վարժ չէր կարող կար-դալ աւետարանը. բայց թուրքերն այդ ինչ կա-րող էին խմանել, միայն նոցա նոյառան այն էր, որ խեղճ եկեղեցականի զլինել կատարելի խա-ղան և նորան խալտատակն: Նորա, եկեղեցումը զանազան ապականութիւնք գործելէն և իւ-րեանց սրբապիղծ դուարձութիւնը կատարելէն յետոյ, դուրս են գալիս եկեղեցուց, կողոպտելով նորա սրբութիւնքը, սկիւնը, խաչը, բուրվառն, մե-ռօնը, և գիւղի մի քանի տներին կրակ տալէն յե-տոյ, դնում են ֆայսըզար կոչումով գիւղը, այդ տեղից պարսկերէն գրուած մի նամակ են ձառ-բում քահանային, որ 20 ուսուրի փող ուղարկէ, միւսօրն յետ կտան, որովհետ նորանց պէտք չէր: Խեղճիկ գիւղացիք իւրեանց սրբութիւնք թուրքերի ձեռքից ազատելու համար, յուղարկում են խեղ-րած արծաթը, բայց Ամիրզատուն, ստանալով այդ գումարը, դարձնում յետ չէ դարձնում միւսօրն:

Այդ անցքը պատճառ է յալիս 9-ին և դուրս գործողն այն անձն է, որ կառավարութիւնից նը-շանակուած է որպէս գաւառապետ, որպէս դա-տար, տեղային կարգերի և կանոնների վերա հակելու համար. . . .

Այդ անցքի մասին խնդիրը մատուցուել է մինը թարբերու. Նախընտրուցաբար, միւսն Սահարի գիւղանին, և երկու օրինակ նոյն խնդրի ներկայա-ցուած է Ռուսաց և Անդրկասպցի հիւպատոսարան-ներին: Տեսնելով ինչպիսի կլիմայնայ:

Այդպիսի անցքերը Վարդապետն նոր բան չեն: Անցեալ տարի միևնոյն գիւղից մէկ վերստ հնաւորութեամբ զանաւոր մի հայ գիւղում, եր-կու հօրեգրար խաներ միմեանց հետ պատերազ-մելու ժամանակ, նոցանից մինը 15 հոգիով մրտ-դում են և սկսում այնտեղից հրացաններ արձա-կել դէպի իւրեանց թշնամիքը: Կռուից յետոյ, նոցա անթախանում են եկեղեցին և եղած սրբութիւնքը, եկեղեցական անօթները կողոպտելով, հեռանում են:

Կրկնում ենք, որ այդպիսի դէպքեր պատճառ են Վարդապետի խիստ յաճախ իսկ ըսած, կա-ռավարութիւնը խիստ ստանալորութեամբ նայում է դոցա վերայ, որպէս մի սովորական բանի վե-րայ. . . .

Մշակի բաժանորդներից մինը

ԱՐՏԱՐԻՆԻ ԼՈՒՐԵՐ

—Journal de Genève լրագիրը ասում է որ յուլիսի 25-ին հասնւ. Հռոմ Հասունեան հայ-կա-թօլիկ պատրիարքը: Հռոմի պապը ընդունել նո-րան մեծ սիրով, նա նորան համբուրել և ըն-ծաներ արաւ, համարելով նորան մարտիրոս, որովհետ Հասունեանը պապականութեան էր արեւել-քում պապի իշխանութիւնը:

—Նորբրունս խալիպայի Տուրքինո քաղաքում մշակների մի ժողով կար, որտեղ վճռվեցաւ պա-հանջել որ բարձրացնեն օրական վարձը մինչև 30% և պակասեցնեն օրական աշխատանքի ժամերը մինչև 10-ը:

—Գերմ. Kölnische Zeitung լրագիրը հաղոր-դում է, թէ Գերմանիայի և Շվեյցարիայի մէջ կապ-վեցաւ մի պայման որ թող է տալի չվեցարացի բժշկներին իրանց օգնությունը աղան վարել Ելզասի մէջ, իսկ միւս կողմից գերմանացի բժշկներին Շվե-յցարիայի ինչն, Զօլմարն և Բադէ կանտոն-ներին մէջ:

—Լէմբերգ քաղաքում (Գալիցիայում) հրատա-րակվող լէմբերգ «Macedonia» լրագիրը, օգոստոսի 5-ին հրատարակվեցաւ և չըջանալով չի յիշատակ լէմբերգի բաժանման հարիւր տարվայ տարե-դարձի:

—Երբ Մարտիկայում տարածվեցաւ լրագր թէ այնքան աղուշակ էր փոխառութիւնը, քաղաքի փողոցները զարդարվեցան և լուսավորվեցան: Փո-ղոցներում կանչուած էին «կեցցէ հանրապետու-թիւնը»:

—Լրագիրները հաղորդում են, որ Քիւրբայի Մահմուդ-փաշայ մեծ վիզիրի տեղը, այդ պաշտօնի նշանակվեցաւ Մէզհար-փաշայն:

—Հռոմի մէջ, պատմութեան Independance Belge լրագրի թղթակիցը, կղերական կուսակցութիւնը մեծ յուսահատութեան մէջն է, որովհետ վերջին ընտրութիւնների ժամանակ ամբողջ խալիպայում կղերականները մեծ անաջողութեան են պատահել և նոցանից շատ փոքր թիւը ընտրված է եղել:

—Նոյն լրագրի թղթակիցը վէրսայից հաղոր-դում է, որ Յրանսիայի աղղային ժողովի ձախա-կումը կենդրոնի պատգամաւորները նստերի փախ-վելուց յետոյ պիտի չըջարկաւ տարածեն, որի-ցիկաւոր միտքը այն է, «բոլոր հին միապետու-թիւնները մեռել են, և որովհետ այսին ընտրենք միապետութեան և հանրապետութեան մէջ, երկ-բայութիւնը աւելորդ է. այդ վերջինին պատկա-նում է ապագան»:

ԽԱՌԵ ԼՈՒՐԵՐ

Յրանսիայում զինվումէր այժմ մի շատ հե-տաքրքիր գործ: Վերջին պատերազմի ժամանակ աղիւս և ազգասէր Յրանսիայի կապալաւորները հասցնում էին իրանց զորքին կռիւները որոնց տակը թ զ թ ից էր չինած, այնպէս որ խեղճ զին-ւորականները խոնավութիւնից նեղացած էին և նոցանից շատերը փչանում էին: Եւ այն կապալա-ւորները հարուստ մարդիկ էին:

Խմբագրութիւն «Մշակ» լրագրի շնորհակալու-թեամբ տուցաւ պ. Ե. Գ. Արծրունու բրոշուր երկրաբանութեան հարցը Հնդկաստանում, ուսուրէն և Ֆրանսիային լիզուհարով: Ասում են որ շուտով լայս կը տեսնէ նոյն բրոշուրը և հայոց լիզուով:

Պարսկաստանի Համազան քաղաքում ընակ-վումէր մի քահանայի ընտանիք որոյ եկեղեցական անգամները ընտրել էին իւրեանց ամենակիսոտ աւարտարմէրը, —կախարդութիւնը: Այդ արհեստի ուսուցիչը ժամանակի խորին հոգեւորական աւան-դաբար անցանում էր նոյն յիշի մէջ, որպէս սրբ-ւորութիւն: Անհաւատ ժողովուրդը ամէն մի ձա-խարդ հանցամանքներում զիմուէին դէպի կա-խարդները նոցանից օգնութիւն խնդրելու: Նոցա ամենակրէն լիզուհարով արձան է և տալիս էին նորանց զա-նազան թիւխանական փ թ ի կն ոց: Բայց թէ ինչ օգուտ էր ստանում այդ կախարդական փշ-թիկներից ժողովուրդը, այդ ինչն ըստ ինքեան հասկանալի է, այսու ամենայնիւ կախարդների եկամուտը այնքան բազմացաւ, մինչ նոցա սկսան նախանձել միմեանց, և աշխատել դրանելու իւ-րեանց արհեստի մենավաճառութիւնը: Նոցա գի-մում են տեղային կառավարութեանը և վարձու են կախարդութեան մենավաճառութիւնը կապալաւ: Եւ բայ են անում փողոցում հրապարակական կա-խարդանոց, որ կոչվում է քէշիշխան ոց (քա-հանայանոց): Տարեկան տուրքը քէշիշխանոցի կա-ռավարութիւնը դնում է նոյն քաղաքի աղուէսի մարտի վրա, որոյ պղծուած հարկերը կարգումն է համարվում:

Գերմանական ծաղրական լրագիր «Kaddera- datsch» ակնարկելով անհրով Գերմանիայի սահ-մաններից եղբայրների միաբանութեան արտերկու-րասին, տալի է մի պատկեր, որ ներկայացնում է երկաթուղին և Բիւնդարկին երկաթուղու ծառայի շրջով: «Դատարանը պարսկերէն, կանչում է Բիւ-նդարկ ներկայ գանկով քահանային, նստելէք շուտով վազմունքի մէջ, եթէ ոչ գնացք կը հե-ռանայ»: Մի և նոյն ժամանակ նա ծանօթութեան ձեռով աւելացնում է, «Աղագիրը արդելով է գործ դնել, որպէս խօստովանարան»:

Մոսկվայից գրում են, որ շուտով պիտի բացվին այդ քաղաքում դատաւ ժողովութիւններ կա-

նանց համար: Գաղթնիքները կը տեղ երկու տարի, և ամեն տարու վերջը կը լինին հարցա-քննութիւնները: Աւանդելու աւարկանները սոքա կը լինին, ուստայ և օտարազգիների գրականու-թեան պատմութիւնը, ընդհանուր և ուստայ պատ-մութիւն, կրթութեան և արհեստների պատմութիւն, ֆիզիկայ և ուրիշ բնագիտական աւարկանները:

Յրանսիական Revue Scientifique ամսագիրը ասում է թէ նկատված է որ գործը մի երկիր մը-նելով իր հետ է բերում միշտ նոր բոլորի սերմեր և խոտերի տեսակները: Օրինակ 1870—71 թուե-րից յետոյ երեքեան Յրանսիայում նոր խոտերի տեսակները: Նմանապէս գործի և մանաւանդ ձիա-նների միջոցով բերվեցան Յրանսիա խոտերի և բոյսերի նոր տեսակները Ալժերիայից:

Յրանսիայի Բրէստ քաղաքում մեծ անա-ւանակութիւն է գցել եղբայրների միաբանութեան քահանայ Գ. . . և մի Կամիսուէ մէջ խայտառակ յարաբերութիւնները երկաթուղու մի կառքի մէջ: Գաղաքի ընտանիքները բողոքեցին, կամիսուէին խնդրել եղբայրներին քաղաքից հեռացնելու: Բայց տեղութիւն իրան չեղած է պահում այդ խնդրի վերաբերութեամբ իսկ եղբայրներն չարտնական են իրանց համար թէ քահանայական թէ ուսուցչա-կան պաշտօններ վարել և մինչև անգամ հիմնում են այժմ մի նոր ուսումնարան քաղաքում:

Մեր լրագրի 24 համարի խառն լուրերի մէջ հրատարակելով իբրեւ մի նոր լուր Ղուրա քա-ղաքումն ձիւս կաթից խմիչը չինեն (KUMISCH). Այն լուրի մէջ մենք զրեցնել նոյնպէս, որ այնքան հա-ճելի եղաւ այդ նոր խմիչը տեղական բնակիչ-ներին, որ մինչև անգամ առողջներն ևս ան-տես չարին ճաշակել: Այս մեր յայտարարութիւնը առաջ բերեց հետեւեալ անսպասելի հանգամանք-ներն, պ. քաղաքական բժիշկն Ղուրայի վիճակին է բացել այդ փրկարար հանքն կաթնէզործու-թեան, Այդ պարոն կուրիս չինողն նեղացել է և սղաճում է մեղանից զանգաւոր ջրէական օրէնք-ների գործութեամբ (?) որ մենք ասել ենք թէ առ-ողջներն ևս խմում են և թէ զինն նշանակած է մի ուսուրի արծաթ ամէն մէկ չին, այն ինչ այդպէս չէ, այլ թէ քիչ և շատ խմողն մի զինն վճարում օրն մի ուսուրի (տես Մեղու Հայաստանի 22 հա-մարն), բայց որովհետ մի բաժակից սկսում են և հասնում մինչի 3, 4 չինից ասելի իւրաքանչիւր օրը, ամէնայն անձն վայելում է իւր կարողու-թեան չափ հետեւելով Ռուսաց առաջին «здравый смысл»-ի թէ հիւսնող իւր ախորժակն հասցնում է այդ մեծութեանը ուրեմն ստողջն ինչու չի կարող խմել իւր բաւականութեան համար, թէ և կուրիսի պաշտպանողներից մէկը (տես Մեղ. Հայ. վերջի-չիսը համարը) ասում է որ այդ խմիչը անհամ է և խղճմամբով բժիշկը ոչ մի ժամանակ չի կա-րող տալ խմիչը առողջ մարդին: Բայց մենք կա-րող ենք ասել այդ պաշտպանողին որ կուրիսն բա-ւականին համեղ է և ունենալով իւր մէջ հետեւեալ մասնիկներն (Գորուր—Բեղաւնի) 100 մասումն ձիւս կաթնէ ընդ—82,837, պղինձ մասը—17,163, թան ԲՈՅՈՒՆՆԵՆ և յիւսնական (ԲՆՈՒՆՆԵՆ) 1,641, իւր—6,872 կաթնի չաքար է զանազան աղեր—8,650 և այլն: Ահա այս մասնիկներից զոյգացած լինելով ձիւս կաթն շատ քիչ տարբերութիւն ունի ուրիշ կաթ-ներից: Նմանակալով քաղաքային կամ կաթ-նային թթուութեան անհետ քիչացումէն հե-տեւեալ մասնիկներն: Ամէնալիւրը մարմնինը սօ-կոնի սեւից (Պատեր) և կաթնային թթուութեան հետ նոյնպէս մի քաղցրեղէն մասը, ածխածնու, մի օդական գործութիւն և վերջապէս մի փոքր իւրի թթուութիւն (Վիւնէ): Ուրեմն լուս պատրաս-տուած կաթիւր պէտք է լինի զովորար, մանդիւ, և քէֆ տուղ, ինչքան այդ պայմաններն կատա-րում է Ղուրայի քաղաքի թթուարած ձիւս կաթը մենք չենք կարող ասել, բայց նամակներից պ. պ. պաշտպանողների Մեղուի մէջ և այլ մի նամակ գէպի մեջ պ. Աղաւանդի և վերջապէս չի հա-կանալն մեր յայտարարութեան ողին և միտքն, ցոյց են տալի ականապէս, որ թթուարած ձիւս կաթը առանց ներգործութեան չի մնում խմիչ-ների վրայ: Բոլոր սրտի խորհուրդ կը տալի չի աւելացնել այդպէս խորամանկ խմիչի քանա-կութիւնը, միտ բերելով, որ կուրիս ստեղծող զա-ւակներն դրան գործ են անում ինչպէս արեւը-նող խմիչը:

Մ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (յուլիսի 31-ին)
ԼՕՆԻՕՆ.—մի ուսուրի ամէ 327/10 պէնս (փոխա-նակ 40 պէնս):
ՓԱՐԻՑ.—մի ուսուրի ամէ 347 սանախ (փո-խանակ 400 սանախ):
Աւալին ներքին 5% փոխառութեան տոմսակ 152%
Երկրորդ 153%

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մամուլի տակից դուրս եկաւ «Մանկական աշխարհի» երկրորդ հատորը թարգմանութիւն պ. Կամ-սար Տէր-Գաւթեանից: Այս գիրքը յարմար ընթերցարան է Դպրոցների համար: Ինն է 80 կող. իսկ ձա-նապարհի ծախքով մէկ ուսուրի: Կա-րելի է ստանալ Ստաւրապոլի Հայոց ուսումնարանի Հոգաբարձութիւնից, կանխիկ ուղարկելով դրամ և Տէր-խիսում պ. Վարդանեանի և ընկ. գրավաճառանոցումը:

ԹԻՖԼԻՑԻ ՓՈՍՏՆԵ	
Ռուսաստան, Արտասահման ամեն օր	
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. Գուրմայիս, Գարբանդ, և Երևան գաւառը:	
ԵՐԵՐՇԱՐԹԻ. Բաղու, Գանջա, Շուշի, Շամախի, ԶՈՐԵՐՇԱՐԹԻ. Գուրմայիս, Երևան, Ախալցխա Գարբանդ:	
ՀԻՆԳՇԱՐԹԻ	
ՈՒՐՐԱՐԹ. Գուրմայիս, Երևան, Ախալցխա, Զաքաթալ, Նուխի:	
ՇԱՐԱՐԹ. Բաղու, Գարբանդ, Գանջա:	

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱ-ԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	
(օգոստոսի 10-ին)	
ՈՍԿԻՆ, (պօլուխիկերիւ)	6 ա. 20 կ.
ՓՈՒՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պօլս.	
վճարելիք (լիւր Օսմանեան)	6 " 70 "
ՐԱՄԲԱԿԱՆ Երևանու.	5 " 25 "
Ամերիկայի սերմից.	7 " 20 "
ՐԱՄԲԱԿԱՆ Տրապիզոնի անգոր.	12 " — "
ՇԱՐԱՐԹ Ռօր (Բրոցիւ)	8 " — "
միւս տեսակը	7 " 80 "
զաքաթալի տրանցիւր.	5 " 50 "
մարք վճարած	8 " 55 "
ՇԱՐԱՐԹԱՅԸ Ռօր.	7 " 90 "
ԲՈՒՐԴԻ թուշի	8 " — "
թարեխամի	4 " — "
ՂԱՎԱ Լիվանի լաւ.	13 " 50 "
Մարտիկից, ցածրը	12 " 50 "
Մօլո, շատ բաւ	14 " 70 "
ՊԳՊԵՐԸ	11 " 50 "
ԵՐԿԱՐ.	3 " 50 "
ՄՈՍ	12 " — "
ԱԼԻԲԵՐ Կրուպոստոկայ Ռու-սաստանի բերքը փութը.	
ԱԼԻԲԵՐ Կրուպոստոկայ Ալիւր-դեանի տեղական քաղաքից (Գե-անջալում).	№ 1 փութ 3 " 20 "
№ 2 " 2 " 40 "	
№ 3 " 2 " 10 "	
ԱԼԻԲԵՐ Գանջու հատարակ	1 " 90 "
Շորաղեալու	1 " 80 "

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	
(յուլիսի 31-ին)	
ԼՕՆԻՕՆ.—մի ուսուրի ամէ 327/10 պէնս (փոխա-նակ 40 պէնս):	
ՓԱՐԻՑ.—մի ուսուրի ամէ 347 սանախ (փո-խանակ 400 սանախ):	
Աւալին ներքին 5% փոխառութեան տոմսակ 152%	
Երկրորդ 153%	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մամուլի տակից դուրս եկաւ «Մանկական աշխարհի» երկրորդ հատորը թարգմանութիւն պ. Կամ-սար Տէր-Գաւթեանից: Այս գիրքը յարմար ընթերցարան է Դպրոցների համար: Ինն է 80 կող. իսկ ձա-նապարհի ծախքով մէկ ուսուրի: Կա-րելի է ստանալ Ստաւրապոլի Հայոց ուսումնարանի Հոգաբարձութիւնից, կանխիկ ուղարկելով դրամ և Տէր-խիսում պ. Վարդանեանի և ընկ. գրավաճառանոցումը: